ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-864[2]-05.10.2015-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասում «Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոնները» բառերից հետո լրացնել «բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ներկայացուցչի պաշտոնը» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եվ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների առաջարկությունների մասին

| Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|---|
| ՀՀ կառավարություն | «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ | | |
| | 1. Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու նպատակով՝<br>1/ 1-ին հոդվածում «պարբերությունից» բառը փոխարինել «մասից» բառով: | Ընդունվել է | Նախագծի 1-ին հոդվածում «պարբերությունից» բառը փոխարինվել է «մասից» բառով |
| | 2/ 2-րդ հոդվածից հանել «համարվում» բառից հետո» բառերը: | Ընդունվել է | Նախագծի 2-րդ հոդվածից հանվել են «համարվում» բառից հետո» բառերը |
| | 3/ 3-րդ հոդվածում «թեկնածությանը» բառը փոխարինել «թեկնածությունը» բառով: | Ընդունվել է | Նախագծի 3-րդ հոդվածում «թեկնածությանը» բառը փոխարինվել է «թեկնածությունը» բառով |
| | 4/ Նախագծի 6-րդ հոդվածում «կետը» բառը փոխարինել «կետում» բառով: | Ընդունվել է | Ընդունվել է:<br>Կատարվել է անհրաժեշտ փոփոխություն: |

| | | | |
|---|---|---|---|
| | «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ | | |
| | 1/ Նախագծով տալ «Դիլիջան համայնք» հասկացության սահմանումը: | Ընդունվել է | Ընդունվել է:<br>Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հետո լրացվել է 1.1 կետ հետևյալ բովանդակությամբ<br>«1.1) Դիլիջան համայնք՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի հավելված 2-ի 2.10 բաժնի 3-րդ կետով սահմանված վարչատարածքային միավոր.» |
| | 2/ Նախագծի տարբեր դրույթներում «քաղաքի» բառը փոխարինվում է «համայնքի», «համայնքի բնակավայրեր», «քաղաքային բնակավայր» բառերով, «Դիլիջան քաղաքի» բառերը՝ «Դիլիջանի» բառով: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հստակեցնել նախատեսվող փոփոխությունները, քանի որ վերջիններս թույլ չեն տալիս միանշանակ ընկալել և տարանջատել, թե որ դրույթներում է անհրաժեշտ կիրառել «Դիլիջան», որոնցում «Դիլիջան համայնք», «Դիլիջան քաղաքային բնակավայր» հասկացությունները: | Ընդունվել է | Ընդունվել է:<br>Կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ |
| | 3/ Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասում «Տարածքի այն համայնքների» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Տարածքի այլ համայնքների» բառերով՝ նկատի ունենալով օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի դրույթները: | Ընդունվել է | Ընդունվել է<br>նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասում (ներկայիս 2-րդ) «այն» բառը փոխարինվել է «այլ» բառով |
| | 4/ Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու նպատակով. | | |
| | ա) նախագծի 1-ին հոդվածի համաձայն օրենքի վերնագիրը շարադրվում է նոր խմբագրությամբ: Այս կապակցությամբ | | Ընդունվել է<br>Կատարվել է անհրաժեշտ |

| | | | |
|---|---|---|---|
| | անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենքի վերնագրից հանվում է միայն «քաղաքային» բառը, հետևապես վերջինս նոր խմբագրությամբ շարադրելու անհրաժեշտությունն առկա չէ:<br><br>բ) 2-րդ հոդվածից հանել «օգտագործվող» բառը: Նույնը վերաբերում է նախագծի ամբողջ տեքստին:<br><br>գ) 7-րդ և 10-րդ հոդվածներում «հոդվածում» բառն փոխարինել «հոդվածի» բառով, 8-րդ հոդվածի «1-ին մասում» բառերը փոխարինել «1-ին մասի» բառերով, իսկ 10-րդ հոդվածի 3-րդ մասում «մասում» բառը՝ «մասից» բառով:<br><br>դ) 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը միավորել մեկ կետում: | Ընդունվել է<br><br>Ընդունվել է<br><br>Ընդունվել է<br><br>Ընդունվել է | փոփոխությունները<br><br>Ընդունվել է<br>Կատարվել է անհրաժեշտ փոփոխությունները<br><br>Ընդունվել է<br>Կատարվել է անհրաժեշտ փոփոխությունները<br><br>Ընդունվել է<br>Կատարվել է անհրաժեշտ փոփոխությունները |
| ՀՀ կառավարություն | «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժը» կետի համաձայն համայնքային ծառայողին պաշտոնից ազատման հիմքերից է համապատասխան մարմնի լուծարումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով «լուծարում» եզրույթը կիրառվում է իրավաբանական անձանց դեպքում, մինչդեռ համայնքային ծառայությունն իրականացվում է համայնքի ավագանու որոշմամբ ստեղծված համայնքային կառավարչական հիմնարկում՝ համայնքապետարանի աշխատակազմում: «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի համաձայն, որով կարգավորվում են նաև համայնքային կառավարչական հիմնարկների հետ կապված հարաբերությունները, կիրառվում է «գործունեության դադարում» եզրույթը, որին համապատասխան առաջարկվում է փոփոխություն կատարել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժը» կետում: | Ընդունվել է | Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժը» կետում «լուծարումը» բառը փոխարինվել է «գործունեության դադարումը» բառերով |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Ա. Հովհաննիսյան | «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող 5.2-րդ հոդվածում նշված է համայնքների միավորման կամ բաժանման հետևյալ սկզբունքը «Պատշաճ կառավարման իրականացում»: Առաջարկում եմ առավել հասկանալի դրծնել «պատշաճ» հասկացությունը | Ընդունվել է | «Պատշաճ կառավարում» արտահայտությունը կիրառել ենք որպես միջազգային փասաթղթերում վերջին տարիներում լայն տարածում գտած «Good governance» սկզբունքի թարգմանություն: Միգուցե, պատշաճ բառը լիովին չի արտահայտում այդ սկզբունքի բովանդակությունը, ուստի, այն փախարինվել է «արդյունավետ» բառով: |
| ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հ. Մարգարյան | «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5.1 հոդվածում «Նոր համայնքներ» բառերը փոխարինել «Բազմաբնակավայր համայնքներ» բառերով: | Չի ընդունվել | Նախագծի 5.1-ին հոդվածում խոսքը գնում է նոր համայնքների ձևավորման հնարավոր տարբերակների մասին և նախատեսվում է, որ դա կարող է տեղի ունենալ երկու դեպքում՝ համայնքների միավորման կամ համայնքների բաժանման դեպքերում, քանի որ ՀՀ – ում որևէ տարածք չկա, որն ընդգրկված չլինի որևէ համայնքի վարչական տարածքում: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ համայնքների բաժանման դեպքում կարող են ստեղծվել առանձին (ինքնուրույն) համայնքներ, որոնք բազմաբնակավայր չեն: |
| | 5.3 հոդվածը վերախմբագրել, ըստ որի «Համայնքների միավորման կամ բաժանման չափորոշիչները սահմանվում են օրենքով, Ազգային ժողովի կողմից կառավարության առաջարկությամբ: | Չի ընդունվել | Կարծում ենք, համայնքների խոշորացման չափորոշիչները ՀՀ կառավարության կողմից սահմանելն ավելի նպատակահարմար է, քանի որ այդ չափորոշիչների հիման վրա մշակվում են օրենքների նախագծերը, որոնք հետագայում ներկայացվում են ՀՀ Ազգային Ժողով և ընդունվում վերջինիս կողմից: Ի դեպ, այդ չափորոշիչներն արդեն հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից (ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի նիստի №44 արձանագրային որոշում) |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հ. Բիշարյան | «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող 8.1-ին կետում հստակ չէ վարչական ներկայացուցչի թեկնածության վերաբերյալ համայնքի բնակիչների համաձայնեցման մեխանիզմը | Ընդունվել է | Նշված կետում տրված կարգավորումն արված էր համաձայնեցման ցիկլը ինչ-որ կերպ սահմանափակելու միտումով, և, իրոք, մնում էին որոշ չկարգավորված հարցեր, մասնավորապես, վարչական ներկայացուցչի նույն թեկնածությունն է քննարկվելու բնակիչների կողմից, թե ոչ, երկու անգամ թեկնածուի վերաբերյալ բնակիչների համաձայնությունը չստանալու դեպքում համայնքի ղեկավարը այդ թեկնածուին է նշանակում վարչական ներկայացուցիչ, թե ոչ: Քննարկումների, ինչպես նաև ՀՀ ԱԺ պատգամավորների առաջարկությունների (մասնավորապես, Ս. Մարգարյանի) արդյունքում նշված կետը խմբագրել ենք՝ համայնքի ավագանու վրա թողնելով վարչական ներկայացուցչի թեկնածության վերաբերյալ համաձայնություն տալու ամբողջ ընթացքը (իր իսկ կողմից մշակված կարգի միջոցով): |